# ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԵՐԱՇԽԻՔ

**Լրացուցիչ իրավունքներ Սպառողների շահերի պաշտպանության օրենքների ներքո:** Եթե ԴՈՒՔ սպառող եք, ապա կարող եք ունենալ լրացուցիչ օրինական (օրենքի վրա հիմնված) իրավունքներ, բացի նրանցից, որոնք սահմանված են սույն Սահմանափակ երաշխիքում (ինչպես, օրինակ, ՁԵՐ բնակության երկրում գործող սպառողների շահերի պաշտպանության մասին օրենքներով սահմանված իրավունքներ) («**Սպառողի իրավունքներ**»)։ Սույն Սահմանափակ երաշխիքը սահմանում է որոշակի իրավիճակներ, որոնցում BlackBerry-ից կպահանջվի (կամ չի պահանջվի) BlackBerry Սարքի դիմաց փոխհատուցում տրամադրել: Սույն Սահմանափակ երաշխիքը չի սահմանափակում կամ բացառում BlackBerry Սարքի հետ կապված ՁԵՐ Սպառողի իրավունքները:

**Արտադրողի երաշխիքի ծածկույթը:** Սույն արտադրողի Սահմանափակ երաշխիքը սահմանում է BlackBerry Limited-ի և դրա դուստր ձեռնարկությունների (« **BlackBerry** ») երաշխիքային պարտավորությունները, որոնք վերաբերում են BlackBerry մակնիշի սարքերին և պարագաներին՝ արտադրված BlackBerry-ի կողմից կամ դրա անունից (« **BlackBerry Սարք**»)։ BlackBerry-ն նոր BlackBerry Սարքի վերջնական օգտագործող հանդիսացող սկզբնական գնորդին («**ՁԵՁ**») երաշխավորում է, որ նորմալ օգտագործման պայմաններում BlackBerry Սարքը զերծ կլինի անորակ նյութերի կամ աշխատանքի հետ կապված թերություններից այն ժամկետում, որը սկսվում է ՁԵՐ կողմից սարքը գնելու ամսաթվից և տևում մինչև BlackBerry Սարքի յուրաքանչյուր կիրառելի տեսակի համար սահմանված ժամանակի ավարտը («**Երաշխիքային ժամկետ**»)։ Սույն Սահմանափակ երաշխիքը չի կարող փոխանցվել ՁԵՐ կողմից:

(i) BlackBerry Ձեռքի սմարթֆոնի Երաշխիքային ժամկետը կազմում է մեկ (1) տարի: BlackBerry Սարքի վերաբերյալ հաճախորդների սպասարկման հետ կապված հարցեր ունենալու դեպքում դիմեք այն վաճառողին, ումից ԴՈՒՔ գնել եք BlackBerry Սարքը:

(ii) BlackBerry Porsche Design սմարթֆոնի Երաշխիքային ժամկետը կազմում է երկու (2) տարի: Դիմեք BlackBerry-ի ներկայացուցչին. երաշխիքի հետ կապված հարցերով կոնտակտային տվյալները ներկայացված են www.blackberry.com/gettingstarted կայքում:

(iii) BlackBerry գրասալիկի Երաշխիքային ժամկետը կազմում է մեկ (1) տարի: Դիմեք BlackBerry-ի ներկայացուցչին. երաշխիքի հետ կապված հարցերով կոնտակտային տվյալները ներկայացված են www.blackberry.com/playbookwarranty կայքում:

(iv) Սարքային և ծրագրային բաղադրիչներ պարունակող BlackBerry պարագաների (օրինակ՝ Bluetooth Սարքեր, սմարթ քարտ ընթերցող սարքեր և visor mount բարձրախոսներ) Երաշխիքային ժամկետը կազմում է մեկ (1) տարի: Դիմեք այն վաճառողին, ումից ԴՈՒՔ ձեռք եք բերել BlackBerry Սարքը:

BlackBerry Սարքի հատուկ մոդելների կամ առանձին երկրների համար կարող են կիրառվել Սահմանափակ երաշխիքի բացառություններ (տե՛ս սույն Սահմանափակ երաշխիքի Հավելված 1-ը)։ BlackBerry-ի կողմից կամ անունից վերանորոգված BlackBerry Սարքերի համար կիրառվում է նման վերանորոգված BlackBerry Սարքի երաշխիքային ժամկետի մնացորդը (առկայության դեպքում)։

Եթե BlackBerry-ն հայտնաբերում է BlackBerry Սարքի անսարքությունը Երաշխիքային ժամկետի ընթացքում և այս սարքը ծածկվում է սույն Սահմանափակ երաշխիքով, ապա BlackBerry-ը կարող է իր բացարձակ և բացառիկ հայեցողությամբ.

(i) անվճար փոխարինել BlackBerry Սարքի անսարք մասը նոր կամ վերանորոգված մասով,

(ii) անվճար փոխարինել անսարք BlackBerry Սարքը համանման նոր կամ վերանորոգված արտադրանքով կամ

(iii) փոխհատուցել ՁԵԶ այն զուտ գումարը, որը Դուք վճարել եք BlackBerry Սարքի համար՝ եթե BlackBerry-ը չի կարող վերանորոգել կամ փոխարինել BlackBerry Սարքը (i) կամ (ii) կետի դրույթներին համապատասխան:

Եթե Երաշխիքային ժամկետի ընթացքում BlackBerry Սարքը վերանորոգվի կամ փոխարինվի BlackBerry-ի կողմից կամ անունից, ապա վերանորոգված կամ փոխարինված BlackBerry Սարքի Երաշխիքային ժամկետը կավարտվի սկզբնական Երաշխիքային ժամկետի ավարտի հետ միաժամանակ (բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքը BlackBerry-ից բացահայտ կերպով պահանջում է վերանորոգված կամ փոխարինված BlackBerry Սարքի համար ՁԵԶ տրամադրել ավելի երկար Երաշխիքային ժամկետ): BlackBerry-ի կողմից կամ անունից սույն Սահմանափակ երաշխիքի ներքո երաշխիքային սպասարկման կամ աջակցման համար պայման է հանդիսանում ՁԵՐ BlackBerry Սարքը BlackBerry-ի կողմից լիազորված ծառայությունների մատակարարին վերադարձնելը (ինչպես սահմանված է ստորև` «Ինչպես վերադարձնել Ձեր BlackBerry Սարքը» հատվածում): Երբ ԴՈՒՔ վերադարձնում եք BlackBerry Սարքը համաձայն սույն Սահմանափակ երաշխիքի, և ստանում փոխարինող BlackBerry Սարք, ապա ՁԵՐ վերադարձրած սարքը դառնում է BlackBerry-ի, իսկ փոխարենը ստացած սարքը` ՁԵՐ սեփականությունը: Սույն Սահմանափակ երաշխիքի համաձայն ՁԵԶ փոխհատուցում տրամադրելու դեպքում ԴՈՒՔ պետք է վերադարձնեք BlackBerry Սարքը BlackBerry-ին, որից հետո վերադարձրած BlackBerry Սարքը դառնում է BlackBerry-ի սեփականությունը:

**Բացառություններ և սահմանափակումներ` կապված երաշխիքի հետ:** Սույն Սահմանափակ երաշխիքը չի կիրառվում (ինչպես սահմանված է BlackBerry-ի կողմից)`

(i) BlackBerry Սարքի արագամաշ մասերի նկատմամբ (օրինակ՝ մարտկոցներ ու պաշտպանիչ ծածկ), որոնք նախատեսված են ժամանակի ընթացքում մաշվելու համար՝ բացառությամբ այն դեպքերի, երբ վնասի պատճառը անորակ նյութի կամ աշխատանքի հետ կապված թերությունն է,

(ii) BlackBerry Սարքի բնականոն մաշվածության նկատմամբ,

(iii) եթե BlackBerry Սարքը բացվել, փոփոխվել կամ վերանորոգվել է BlackBerry-ի լիազորությունը չունեցող անձի կողմից,

(iv) եթե BlackBerry Սարքի հերթական համարը, IMEI համարը կամ այլ նույնացուցիչը ջնջվել կամ հեռացվել է,

(v) BlackBerry այն սարքի նկատմամբ, որի վնասվածքը, անսարքությունը կամ թերությունը պայմանավորված է հետևյալով և/կամ հետևյալի արդյունք է հանդիսանում.

(ա) սխալ գործածություն, խոնավության կամ հեղուկների ազդեցություն, ջերմության աղբյուրի մերձավորություն կամ վերջինիս ազդեցություն, պատահականություն, ոչ պատշաճ վերաբերմունք, անփութություն կամ սխալ օգտագործում,

(բ) BlackBerry Սարքի օգտագործում այն պարագաների, ապրանքների, ծառայությունների, ծրագրակազմի, աշխատածրագրերի, օժանդակ կամ արտաքին սարքավորումների հետ, որոնք ուղղակիորեն հաստատված կամ տրամադրված չեն BlackBerry-ի կողմից` BlackBerry Սարքի ՁԵՐ որոշակի մոդելի հետ օգտագործելու համար,

(գ) որևէ այլ բան, ինչը BlackBerry Սարքի թերություն չէ կամ

(դ) BlackBerry Սարքի շահագործում կամ օգտագործում, որը չի համապատասխանում BlackBerry-ի կողմից մշակված և տրամադրված տեղադրման ուղեցույցի կամ վերջնական օգտագործողի ստանդարտ փաստաթղթերի պահանջներն, ներառյալ http://docs.blackberry.com կայքում առկա անվտանգության և շահագործման ցուցումների կամ http://us.blackberry.com/legal/bbsla.jsp կայքում առկա BlackBerry Արտադրանքի լիցենզային համաձայնագրի պահանջները,

(vi) BlackBerry Սարքի մակերևույթի վնասվածքների նկատմամբ, ներառյալ, առանց սահմանափակման, ճեղքվածքները, փոսիկները կամ քերծվածքները,

(vii) BlackBerry Սարքից բացի ցանկացած այլ սարքի, գրասալիկի կամ սարքակազմի նկատմամբ՝ սույն Սահմանափակ երաշխիքի դրույթներին համապատասխան: Օրինակ, այն չի կիրառվում ՁԵՐ կողմից գնված արտադրանքի հետ մատակարարված արտաքին SIM քարտի նկատմամբ կամ ցանկացած այլ տարրի նկատմամբ, որը չի կրում BlackBerry մակնիշը և չի արտադրվել BlackBerry-ի կողմից կամ անունից կամ

(viii) եթե ԴՈՒՔ չեք կարող տրամադրել գնում կատարելու ապացույց, որը վկայում է այն բանի մասին, որ ԴՈՒՔ եք հանդիսանում BlackBerry Սարքի սկզբնական գնորդը և հաստատում է գնում կատարելու ամսաթիվը և վայրը:

Սույն Սահմանափակ երաշխիքը կիրառվում է միայն սարքակազմի նկատմամբ և սահմանափակվում է BlackBerry Սարքով: Այն չի կիրառվում BlackBerry-ի կամ երրորդ անձանց կողմից առաքվող, նախապես բեռնվող կամ տարածվող ծրագրակազմի նկատմամբ՝ նույնիսկ եթե նման ծրագրակազմը փաթեթավորվում կամ վաճառվում է BlackBerry Սարքի հետ կամ հասանելի է դառնում BlackBerry Սարքի համար ավելի ուշ: Ծրագրակազմի լիցենզային պայմանագրերը կիրառվում են ՁԵՐ կողմից BlackBerry Սարքի հետ առնչվող ծրագրակազմի օգտագործման նկատմամբ: BlackBerry Սարքի հետ առաքված BlackBerry-ի արտոնագրված ծրագրակազմի համար ծրագրակազմի լիցենզիան նկարագրված է BlackBerry-ի ծրագրակազմի համապատասխան լիցենզային պայմանագրում:

**Կրկնօրինակե՛ք Ձեր տվյալները:** ԴՈՒՔ պետք է պարբերաբար կրկնօրինակեք ՁԵՐ BlackBerry Սարքի տվյալները, ծրագրակազմը, աշխատածրագրերը և տեղեկատվությունը՝ պաշտպանելով դրանք սարքի աշխատանքի հետ կապված հնարավոր խնդիրներից: Դա հարկավոր է անել նաև BlackBerry Սարքը վերադարձնելուց առաջ: Տվյալների կրկնօրինակման համար պատասխանատվությունը կրում եք ԴՈՒՔ, այլ ոչ թե BlackBerry-ը, վաճառողը, ումից գնել եք BlackBerry Սարքը, կամ լիազորված ծառայություններ մատուցողները, որոնց միջոցով ԴՈՒՔ սպասարկել, վերանորոգել կամ փոխարինել եք BlackBerry Սարքը, ներառյալ, առանց սահմանափակման, համաժամացման ծրագրակազմի օգտագործման հետևանքով տվյալների կորուստը կամ պատճառած վնասը: BLACKBERRY ՍԱՐՔԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒՑ ԱՌԱՋ ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՀԵՌԱՑՆԵԼ ԲՈԼՈՐ ԱՐՏԱՔԻՆ ՍԱՐՔԵՐԸ ԿԱՄ ՀԻՇԱՍԱՐՔԵՐԸ ԵՎ/ԿԱՄ ԱՆՁՆԱԿԱՆ ԿԱՄ ԳԱՂՏՆԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ՍՊԱՍԱՐԿՄԱՆ, ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԿԱՄ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՁԵՐ BLACKBERRY ՍԱՐՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ՋՆՋՎԵԼ ԵՎ/ԿԱՄ ՎԵՐԱՁԵՎԱՉԱՓՎԵԼ ԿԱՄ ԿԱԶՄԱՁԵՎՎԵԼ ՍԱՐՔԻ ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԵՂԱԾ ՎԻՃԱԿԻ (ԿԱԽՎԱԾ ԱՅՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՌԿԱ ԾՐԱԳՐԱԿԱԶՄԻ ԱՐԴԻԱՑՈՒՄՆԵՐԻՑ ԵՎ ԹԱՐՄԱՑՈՒՄՆԵՐԻՑ՝ BLACKBERRY ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԾՐԱԳՐԱԿԱԶՄԻ ԼԻՑԵՆԶԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ), ԻՍԿ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՄ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՍԱՐՔԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՀԵՌԱՑՎԵԼ՝ ԱՌԱՆՑ ՁԵԶ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ: Խնդրում ենք հաշվի առնել, որ սույն Սահմանափակ երաշխիքը չի ներառում BlackBerry Սարքի մեջ եղած ՁԵՐ տվյալների, ծրագրակազմի կամ աշխատածրագրերի կրկնօրինակումը, վերականգնումը կամ վերատեղադրումը:

**Ինչպես վերադարձնել Ձեր BlackBerry Սարքը:** Այս Սահմանափակ երաշխիքը ՁԵԶ է տրամադրվել BlackBerry Limited-ի կողմից: ՁԵՐ BlackBerry Սարքի երաշխիքային սպասարկման անհրաժեշտությունը որոշելու, ինչպես նաև ՁԵՐ BlackBerry Սարքը վերադարձնելու վերաբերյալ հրահանգներ ստանալու համար օգտագործեք BlackBerry որոշակի սարքերի համար նշված համապատասխան Երաշխիքային կոնտակտային տվյալները, որոնք ներկայացված են «Արտադրողի երաշխիքային ծածկույթ» բաժնի աղյուսակում:

BlackBerry-ի կամ BlackBerry-ի լիազորված ծառայություններ մատուցողի հետ հեռախոսային կապ հաստատելու դեպքում կարող են լրացուցիչ վճարներ գանձվել: Հնարավոր է, որ ՁԵԶԱՆԻՑ պահանջվի աջակցություն ցուցաբերել ՁԵՐ BlackBerry Սարքի հետ կապված խնդիրներն ախտորոշելու գործում և/կամ տրամադրել գնման ապացույց, որը վկայում է այն մասին, որ ԴՈՒՔ եք հանդիսանում BlackBerry Սարքի սկզբնական գնորդը, ինչպես նաև հաստատում է սկզբնական գնում կատարելու ամսաթիվը և վայրը: Երաշխիքային սպասարկման տարբերակները, պատասխանելու ժամանակը և վճարները (կիրառելի լինելու դեպքում) կարող են երկրից երկիր տարբերվել: **ԵԹԵ ՁԵՐ BLACKBERRY ՍԱՐՔԸ ՎԵՐԱԴԱՐՁՐԵԼ ԵՔ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՈՒՄ, ՍԱԿԱՅՆ ՍՈՒՅՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԵՐԱՇԽԻՔԸ ՉԻ ՆԵՐԱՌՈՒՄ ՁԵՐ BLACKBERRY ՍԱՐՔԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ, ԱՊԱ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԿԱՄ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՐՈՂ Է ՊԱՀԱՆՋՎԵԼ ԺԱՄԱՆԱԿ ԿԱՄ ՎՃԱՐ ԳԱՆՁՎԵԼ**: ԵԹԵ ՁԵՔ ԲՆԱԿՎՈՒՄ ԱՅՆ ԵՐԿՐՈՒՄ, ՈՐՏԵՂ ԿԱՏԱՐՎԵԼ Է BLACKBERRY ՍԱՐՔԻ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՎԱՃԱՌՔԸ, ԱՊԱ՝

(Ա) ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԸ ԿԱՄ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ԿԱՐՈՂ Է ՀՆԱՐԱՎՈՐ ՉԼԻՆԵԼ,

(Բ) ԿԱՐՈՂ Է ՊԱՀԱՆՋՎԵԼ, ՈՐՊԵՍԶԻ ՁԵՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՔ ՈՐՈՇԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ԵՎ/ԿԱՄ ՎՃԱՐԵՔ ՈՐՈՇ ԾԱԽՍԵՐԻ ԴԻՄԱՑ (ՆԵՐԱՌՅԱԼ, ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ, ԱՌԱՔՄԱՆ ԵՎ ԲԵՌՆԱՓՈԽԱԴՐՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ), ԵՎ

(Գ) ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԸ ԿԱՄ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ, ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ, ԿԱՐՈՂ Է ՍՈՎՈՐԱԿԱՆԻՑ ԱՎԵԼԻ ԵՐԿԱՐ ՏԵՎԵԼ:

**Իրավական պաշտպանության բացառիկ միջոցներ**: **ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԱՅՆ ԴԵՊՔԵՐԻ, ԵՐԲ ՕՐԵՆՔԸ (ՆԵՐԱՌՅԱԼ ՍՊԱՌՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ԴՈՒՔ ՈՒՆԵՔ Ի ԼՐՈՒՄՆ ԱՅՍ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԵՐԱՇԽԻՔԻ) ԲԱՑԱՀԱՅՏ ԿԵՐՊՈՎ ԱՐԳԵԼՈՒՄ Է BLACKBERRY-ԻՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿԵԼ ԿԱՄ ԲԱՑԱՌԵԼ ՁԵՐ BLACKBERRY ՍԱՐՔԻ ՀԵՏ ԱՌՆՉՎՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ,** ԱՅՍ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԵՐԱՇԽԻՔԸ ՍԱՀՄԱՆՈՒՄ Է BLACKBERRY ՍԱՐՔԻ ՀԵՏ ԱՌՆՉՎՈՂ ՁԵՐ ԲԱՑԱՌԻԿ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՑԱՆԿԱՑԱԾ ԱՅԼ ՏԵՍԱԿԻ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ՝ ԲԱՑԱՀԱՅՏ ԿԵՐՊՈՎ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ԿԱՄ ԵՆԹԱԴՐՎՈՂ, ՈՐՈՆՔ ՆԵՐԱՌՈՒՄ ԵՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՊԻՏԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ, ԲԱՎԱՐԱՐ ՈՐԱԿԻ ԵՎ/ԿԱՄ ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿԻ ՀԱՄԱՐ ՊԻՏԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԴՐՎՈՂ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ (ՍԱԿԱՅՆ ՉԵՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՎՈՒՄ ԴՐԱՆՑՈՎ): ՆՄԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ՍՈՒՅՆՈՎ ՄԵՐԺՎՈՒՄ ԵՆ ԵՎ ՉԵՆ ԿԱՐՈՂ ԿԻՐԱՌՎԵԼ ԿԱՄ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒԺ ՈՒՆԵՆԱԼ:

**Պատասխանատվության սահմանափակում**: **ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԱՅՆ ԴԵՊՔԵՐԻ, ԵՐԲ ՕՐԵՆՔԸ (ՆԵՐԱՌՅԱԼ ՍՊԱՌՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ԴՈՒՔ ՈՒՆԵՔ Ի ԼՐՈՒՄՆ ԱՅՍ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԵՐԱՇԽԻՔԻ) ԲԱՑԱՀԱՅՏ ԿԵՐՊՈՎ ԱՐԳԵԼՈՒՄ Է BLACKBERRY-ԻՆ (ԿԱՄ ՁԵՐ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՐԿԻՐԸ, ՆԱՀԱՆԳԸ ԿԱՄ ԳԱՎԱՌԸ ՉԻ ԹՈՒՅԼԱՏՐՈՒՄ BLACKBERRY-ԻՆ) ԲԱՑԱՌԵԼ ԿԱՄ ՍԱՀՄԱՆԱՓԱԿԵԼ ՊԱՏԱՀԱԿԱՆ ԿԱՄ ՀԵՏԵՎԱՆՔԱՅԻՆ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**, ԱՊԱ BLACKBERRY-Ն ԿԱՄ ԴՐԱ

ԱՆՈՒՆԻՑ ԳՈՐԾՈՂ ԿԱՄ BLACKBERRY ՍԱՐՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ, ՏԱՐԱԾՄԱՆ, ՎԱՃԱՌՔԻ, ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ, ՎԵՐԱԴԱՐՁԻ ԵՎ ԱՅԼ ԱՌՈՒՄՆԵՐՈՎ ԴՐԱ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՂ ՈՐԵՎԷ ԱՆՁ ՉԻ ԿԱՐՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿՐԵԼ ՑԱՆԿԱՑԱԾ ՏԵՍԱԿԻ ԱՆՈՒՂՂԱԿԻ, ՊԱՏԱՀԱԿԱՆ, ՀԱՏՈՒԿ ԿԱՄ ՀԵՏԵՎԱՆՔԱՅԻՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՄ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ (ՆԵՐԱՌՅԱԼ, ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ, ՉՍՏԱՑՎԱԾ ԵԿԱՄՈՒՏԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄԸ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ (ԱՅԴ ԹՎՈՒՄ ՆԱԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ) ԿՈՐՈՒՍՏԸ ԿԱՄ ՎՆԱՍՈՒՄԸ ԿԱՄ ԱՅԼ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՎՆԱՍՆԵՐԸ), ՈՐՈՆՔ ԱՌԱՋԱՆՈՒՄ ԵՆ BLACKBERRY ՍԱՐՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՄ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՆՀՆԱՐԻՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ՝ ՆՈՒՅՆԻՍԿ ԵԹԵ BLACKBERRY-Ն ԿԱՄ ԴՐԱ ԱՆՈՒՆԻՑ ԳՈՐԾՈՂ ԿԱՄ ԴՐԱ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՂ ԱՆՁԸ ՆԱԽՕՐՈՔ ԶԳՈՒՇԱՑՎԵԼ Է ՆՄԱՆ ՎՆԱՍՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ: ՍՈՒՅՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԸ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է ԿԻՐԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԵՎ ԿԻՐԱՌՎՈՒՄ Է՝ ԱՆԿԱԽ ԱՅՆ ՀԱՆԳԱՄԱՆՔԻՑ, ԹԵ ԱՐԴՅՈՔ ՆՄԱՆ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎԵԼ Է ՀԱՏՈՒՑՈՒՄ ԿԱՄ ՀԱՐՈՒՑՎԵԼ Է ՀԱՅՑ՝ ԿԱՊՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԿԱՄ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՀԵՏ: BLACKBERRY-Ի ԿԱՄ ԴՐԱ ԱՆՈՒՆԻՑ ԳՈՐԾՈՂ ԿԱՄ ԴՐԱ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՂ ՑԱՆԿԱՑԱԾ ԱՅԼ ԱՆՁԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍՈՒՅՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԵՐԱՇԽԻՔԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ԿՐԱԾ ԿՈՐՍՏԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ՀԱՄԱՐ ՉԻ ԿԱՐՈՂ ԳԵՐԱԶԱՆՑԵԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶՈՒՏ ԳԻՆԸ, ՈՐԸ ԴՈՒՔ ՎՃԱՐԵԼ ԵՔ BLACKBERRY ՍԱՐՔԸ ԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱՄ ՎՆԱՍՎԱԾ BLACKBERRY ՍԱՐՔԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԱՐԺԵՔԸ՝ ԿԱԽՎԱԾ ՆՐԱՆԻՑ, ԹԵ ՈՐ ԳՈՒՄԱՐՆ Է ԱՎԵԼԻ ՄԵԾ: Վերոնշյալը որևէ կերպ չի սահմանափակում մահվան կամ մարմնական վնասվածքների հետ կապված պատասխանատվությունը կամ դիտավորյալ կամ կոպիտ անփույթ գործողությունների կամ բացթողումների համար օրենքով սահմանված որևէ պատասխանատվություն:

**Կանոնակարգող օրենսդրություն:** ՍՈՒՅՆ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆՇՎԱԾ ԵՐԿՐԻ, ՆԱՀԱՆԳԻ, ԳԱՎԱՌԻ ԿԱՄ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ԵՆ՝

(Ա) ՍՈՒՅՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԵՐԱՇԽԻՔԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՍՈՒՅՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԵՐԱՇԽԻՔԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԽԱԽՏՈՒՄԸ ԵՎ ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ

(Բ) ՍՈՒՅՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԵՐԱՇԽԻՔԻՑ ԲԽՈՂ ԿԱՄ ԴՐԱ ՀԵՏ ԱՌՆՉՎՈՂ ԲՈԼՈՐ ՀԱՅՑԵՐԸ, ՎԵՃԵՐԸ ԿԱՄ ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԼԻՆԵՆ ԴՐԱՆՔ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ, ՆԱԽԱՊԵՍ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ, ՆԵՐԿԱ ԿԱՄ ԱՊԱԳԱ, ՆԵՐԱՌՅԱԼ ՕՐԵՆՔԻ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՀԱՅՑԵՐԸ), ՈՐՈՆՔ ԱՌԱՋԱՆՈՒՄ ԵՆ ՁԵՐ ԵՎ BLACKBERRY-Ի ՄԻՋԵՎ:

ԿԱԽՎԱԾ ՁԵՐ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԻՑ, ԿԻՐԱՌՎԵԼՈՒ ԵՆ ՍՏՈՐԵՎ ԲԵՐՎԱԾ ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ՆՇՎԱԾ ԵՐԿՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԲԱՑԱՌՎԵԼՈՒ ԵՆ ԿՈԼԻԶԻՈՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ:

**ՎԵՃԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ/ԻՐԱՎԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**: ՍՈՒՅՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԵՐԱՇԽԻՔԻՑ ԲԽՈՂ ԿԱՄ ԴՐԱ ՀԵՏ ԱՌՆՉՎՈՂ ՑԱՆԿԱՑԱԾ ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՎԵՃ ՊԵՏՔ Է ԿԱՐԳԱՎՈՐՎԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆՈՂ ԻՐԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ, ՈՐԸ ՀԻՄՆՎԱԾ Է ՍՏՈՐԵՎ ԲԵՐՎԱԾ ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ՆՇՎԱԾ ԻՐԱՎԱՐԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՎՐԱ՝ ԿԱԽՎԱԾ ՁԵՐ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԻՑ. (I) ԻՐԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԸ ՀԱՆԴԻՍԱՆԱԼՈՒ Է ՈՐՊԵՍ ԻՐԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ

ԻՐԱՎԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼՈՒ Է ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ, (II) ԻՐԱՎԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԱՆԱԿԸ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ՄԵԿ (1), ԵՎ (III) ԻՐԱՎԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԻ ՎԵՐԸ ՆՇՎԱԾ ԻՐԱՎԱՐԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ: ՍՈՒՅՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԵՐԱՇԽԻՔԻ ՆԵՐՔՈ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՅԱՆԿԱՑԱԾ ԻՐԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՊԱՀՎԵՆ ԽԻՍՏ ԳԱՂՏՆԻ՝ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓՈՎ: ԿՈՂՄԵՐԻ ՄԻՋԵՎ ԾԱԳՈՂ ԿԱՄ ՁԵՋԱՆԻՑ ԲԱՑԻ ՅԱՆԿԱՑԱԾ ԱՅԼ ԱՆՁ ՆԵՐԱՌՈՂ ՎԵՃԵՐԸ ՉԵՆ ԿԱՐՈՂ ՄԻԱՎՈՐՎԵԼ ԿԱՄ ՀԱՄԱԿՑՎԵԼ ԱՌԱՆՑ BLACKBERRY-Ի ՆԱԽՆԱԿԱՆ ԳՐԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ:

Եթե ՁԵՐ մշտական բնակության վայրը գտնվում է Եվրոպայում, Մերձավոր Արևելքում կամ Աֆրիկայում, ապա այս Սահմանափակ երաշխիքը կառավարվում է Անգլիայի և Ուելսի օրենքներով և Դուք տալիս եք Ձեր համաձայնությունը, որպեսզի իրավարարության տեղադրությունը լինի Լոնդոնում (Անգլիա) և իրավարարությունն իրականացվի Լոնդոնի միջազգային իրավարարության դատարանի կանոնների համաձայն: Եթե ՁԵՐ մշտական բնակության վայրը գտնվում է Ասիայում, ապա այս Սահմանափակ երաշխիքը կառավարվում է Նյու Յորք նահանգի օրենքներով և Դուք տալիս եք Ձեր համաձայնությունը, որպեսզի իրավարարության տեղադրությունը լինի Նյու Յորքում (Նյու Յորք, ԱՄՆ) և իրավարարությունն իրականացվի Լոնդոնի միջազգային իրավարարության դատարանի կանոնների համաձայն: Եթե ՁԵՐ մշտական բնակության վայրը գտնվում է Հյուսիսային կամ Հարավային Ամերիկայում, ապա այս Սահմանափակ երաշխիքը կառավարվում է Նյու Յորք նահանգի օրենքներով և Դուք տալիս եք Ձեր համաձայնությունը, որպեսզի իրավարարության տեղադրությունը լինի Նյու Յորքում (Նյու Յորք, ԱՄՆ) և իրավարարությունն իրականացվի Ամերիկայի իրավարարության ասոցիացիայի Առևտրային իրավարարության կանոնների համաձայն:

**Գաղտնիություն**: BlackBerry-ի կողմից ստացված հաճախորդների մասին տեղեկատվությունը օգտագործվելու, վերամշակվելու, փոխանցվելու և բացահայտվելու է համաձայն BlackBerry-ի Գաղտնիության քաղաքականության (կարող եք ծանոթանալ *http://www.blackberry.com/legal/privacy.shtml* կայքում)՝ սույն Սահմանափակ երաշխիքում նկարագրված երաշխիքային սպասարկումն իրականացնելու նպատակով: Դա կարող է ներառել ՁԵՐ մասին տեղեկությունների և BlackBerry Սարքի ձեռքբերումը ծառայություններ մատուցողներից, վաճառողներից, վերավաճառողներից և պաշտոնական ներկայացուցիչներից, որոնք ներգրավված են BlackBerry Սարքի պահպանության ապահովման շղթայում, որի միջոցով իրականացվում է երաշխիքային սպասարկումը, ինչպես նաև ՁԵՐ մասին տեղեկությունների և BlackBerry Սարքի փոխանցում BlackBerry-ի դուստր ձեռնարկություններին և մասնաճյուղերին կամ BlackBerry-ի ծառայություններ մատուցողներին:

**Այլ դրույթներ**: Սույն Սահմանափակ երաշխիքի և ՁԵԶ տրամադրված ցանկացած այլ երաշխիքի (ներառյալ, առանց սահմանափակման, BlackBerry Սարքի փաթեթավորման մեջ ներառված երաշխիքի) միջև եղած հակասությունների դեպքում, նման հակասությունների շրջանակներում BlackBerry-ի կողմից կիրառվելու են սույն Սահմանափակ երաշխիքի դրույթները: Եթե սույն Սահմանափակ երաշխիքի որևէ պայման, դրույթ կամ ենթաբաժին ճանաչվի անվավեր, ուժը կորցրած կամ իրավաբանական ուժ չունեցող, ապա դա չի ազդի նման պայմանի, դրույթի կամ ենթաբաժնի մնացած մասի կամ սույն Սահմանափակ երաշխիքի վավերականության կամ կիրառելիության վրա: